ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 27 » հոկտեմբերի 2017 թվականի N 30

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2017 Թ. 9 ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի բյուջեի 2017թ. 9 ամսվա կատարման հաշվետվությունը. 01-01-2017թ-ից մինչև 01.10.2017թ,

հազար դրամ.

| Հ/Հ | Եկամտատեսակ | Նախատեսված տարեկան | Նախատեսված 9 ամսվա | Փաստացի | Կատարման %-ը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկ | 3430.5 | 2572.9 | 1637.0 | 64 |
| 2. | -//- վարձավճար | 700.0 | 525.0 | 656.8 | 125 |
| 3. | Գույքահարկ ավտո. | 2900.0 | 2175.0 | 1793.0 | 82 |
| 4. | -//- շինություններից | 50.0 | 37.5 | 50.6 | 135 |
| 5. | Տեղական տուրքեր | 100.0 | 75.0 | 152.0 | 202 |
| | Ընդամենը սեփական եկամուտներ | 7180.5 | 5385.4 | 4289.4 | 80 |
| 6. | Այլեկամուտներ(տեղական վճար) | – | – | 82.9 | – |
| 6. | Դոտացիա | 49395.0 | 37046.2 | 37046.2 | 100 |
| 7. | Սուբվենցիա | 5000.0 | 5000.0 | 5000.0 | 100 |
| Հանրագումար | | 61575.5 | 47431.6 | 46418.5 | 98 |

Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝ Հ.Գասպարյանը, Ա.Ավետիսյանը, Ռ. Ռուբենյանը:
Նրանք ներկայացրեցին առաջարկություններ համայնքի 2017թ. տարեկան բյուջեն ամբողջությամբ և սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ հարկատեսակների կատարելու համար:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 84-րդ հոդվածի 2-րդ կետի ՀՀ «Բյուջետային

համակարգի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի կողմից ներկայացրած համայնքի 2017թ. 9 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին՝ ամենօրյա, հետևողական աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը սահմանված տարեկան չափով, ամբողջությամբ և ըստ առանձին հարկատեսակների կատարելու ուղղությամբ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 27 » հոկտեմբերի 2017 թվականի N 31

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Գասպարյան,արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Ս. Սիմոնյանը Ռ. Ռուբենյանը Հ. Ասատրյանը) :

Նշեցին , որ 2017թ-ի գյուղատնտեսական աշխատանքները համայնքում ընթացել են կազմակերպված, համայնքապետարանը աջակցել է համայնքի հողօգտագործողներին ազոտական պարարտանյութի, դիզելային վառելանյութի մատչելի, շուկայականից ցածր գնով ձեռք բերման, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և որակով կատարելու ցանքի, մշակության, ոռոգման և բերքահավաքի աշխատանքներում:

Համայնքում գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար համայնքին անհրաժեշտ է վարող տեխնիկա և հացահատիկի շարքացան, պակասում է բերքատու հացահատիկի և կարտոֆիլի սերմեր:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի և 49-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին

որոշում է.

Աջակցել գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլն աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը: Գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար աջակցել համայնքի հողօգտագործողներին տեխնիկայով, դիզ-վառելանյութի և սերմացուների ձեռք բերելուն, կազմակերպել համայնքի ոռոգման ցանցերի շահագործումը, կատարել դրանց պահպանումն ու վերանորոգումը:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ
ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ